Երևանի Հրանտ Դինքի անվան թիվ 44 հիմնական դպրոց

# Վերապատրաստվող ուսուցչի հետազոտական աշխատանք

# Թեմա՝ «Շրջված դասարան» մեթոդի կիրառումը տարրական դպրոցում

Կատարող՝ Ռուզաննա Սահակյան

Մենթոր՝ Վերոնիկա Բաբաջանյան

Երևան 2022

## Բովանդակություն

Բովանդակություն----------1

Ներածություն ---------- 2

Մաս 1 Ուսուցման մեթոդները տարրական դասարաններում---------- 5

Մաս 2 Շրջված դասարան մեթոդի առանձնահատկությունները----------7

Մաս 3 Շրջված դասարան մեթոդի դրական և բացասական կողմերը ----------11

Վերջաբան----------13

Գրականության ցանկ----------16

## Ներածություն

Ներկայումս կրթական համակարգն ակտիվորեն արդիականացվում է, ներմուծվում են նորագույն ժամանակակից միջոցներ, որոնք կարևոր են բազմաֆունկցիոնալ կրթական գործունեությունների զարգացման համար: Դրանք նպաստում են սովորողների մոտ ստեղծագործական մտածելակերպի զարգացմանը, ոչ ստանդարտ լուծումներ գտնելու կարողությանը, մարդկային և անձնային հատկանիշների ձևավորմանը, նախաձեռնողականությանը:

Ուսումնական գործընթացի հիմնական բնութագիրը նպատակն է, դրանից է կախված ուսուցման բովանդակության և մեթոդի ընտրությունը: Նպատակից ու ուսուցման բովանդակությունից է կախված դասավանդման մեթոդի ընտրությունը:

Գոյություն ունեն բազմաթիվ հետազոտություններ՝ նվիրված տարրական դպրոցում ուսուցման մեթոդիկային: Ներկայումս ժամանակակից մեթոդներով դաստիարակման արդյունքի հասնելու համար ուսուցիչները կարող են գործածել տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցները, որոնք թույլ են տալիս ոչ միայն պահպանել ուսումնական գործընթացի բնականոն ընթացքը, այլ նաև նոր հնարավորություններ են տալիս նորամուծություններ ներդնել ուսումնական գործընթացում, ինչն էլ իր հերթին լրացուցիչ հետաքրքրություն կառաջացնի աշակերտների մոտ ուսման նկատմամբ:

Այսպիսով, ժամանակակից մանկավարժության պրակտիկայում շատ մեծ տարածում է ստանում խառը ուսուցումը, որն իր մեջ ներառում է ավանդական դասական դասի համակարգը և ժամանակակից թվային կրթությունը՝ հիմնված տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունների վրա:[1]

Շնորհիվ դասապրոցեսում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման՝ դեռևս 2000-ական թթ.-ին ԱՄՆ-ում առաջացել է Շրջված դասարան մեթոդի

[1] https://www.youtube.com/watch?v=SHS96Icdk2U

գաղափարը։ Մեթոդի հիմնադիրներն են ամերիկացի քիմայի ուսուցիչներ, ովքեր առաջինն են սկսել ձայնագրել տեսադասեր և ուղարկել իրենց աշակերտներին՝ որպես տնային աշխատանք։ Աշակերտները լսել են ուսուցչի բացատրությունը, իսկ տնային աշխատանքները կատարել դասարանում։

ՏՏ միջոցների կիրառումը հայկական ուսումնական գործընթացում լայն տարածում ստացավ 2020 թ.-ին, երբ համավարակի պատճառով ամբողջ առկա ուսումնական գործընթացը անցավ հեռավարի։

Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ ուսուցիչները հետաքրքրված են նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման և ուսումնական գործընթացում նորամուծություններ փորձարկելու հնարավորություններով, որը թույլ է տալիս ուսուցումը հասցնել ժամանակակից կրթության բարձր արդյունքների։

Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել Շրջված դասարան մեթոդը, տարբերակել և գտնել մեթոդի դրական և բացասական կողմերը, ինչպես նաև՝ պարզել, թե որքանով են պատրաստ այդ մեթոդը կիրառել տարրական դասարանների աշակերրները, արդյո՞ք նրանք այդ տարիքում պատրաստ են նման լայնածավալ փոփոխության։

Հետազոտության օբյեկտը՝ տարրական դասարանների աշակերտների ուսուցումը տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով։

Հետազոտության առարկան՝ Շրջված դասարան մեթոդի կիրառումը տարրական դպրոցի աշակերտների ուսուցման ընթացքում։

Հետազոտության նպատակը՝ ստուգել Շրջված դասարան մեթոդի կիրառման հնարավորությունը և արդյունավետությունը տարրական դպրոցի դասերին կիրառելու ժամանակ։

Համաձայն հետազոտության օբյեկտի, առարկայի և նպատակի՝ առաջադրված են հետևյալ առաջադրանքները.

Անցկացնել հոգեբանամանկակավարժական, կրթամեթոդական և ուսումնական գրականության ուսումնասիրություն կապված ուսուցման մեթոդների հետ։

Անցկացնել կրթական, մեթոդական և ուսումնական գրականության ուսումնասիրություն՝ կապված Շրջված դասարան մեթոդի կիրառման հետ։

Փորձարկումներով ստուգել մեթոդի կիրառման արդյունավետությունը տարրական դպրոցի դասերին կիրառելու ժամանակ։

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 2 հիմնական մասերից, վերջաբանից, բովանդակությունից և գրականության ցանկից։

## Մաս 1

## Ուսուցման մեթոդները տարրական դասարաններում։

Տարրական դպրոցում առարկաների յուրացման գործընթացը սերտորեն կապված է ուսուցման մեթոդների հետ։ Ուսուցման մեթոդ հասկացությունը մեթոդաբանության մեջ հիմնականներից մեկն է հանդիսանում։ Ուսումնասիրենք այս հայեցակարգի մեկնաբանման ուսուցման մեթոդների դասակարգման հիմնական մոտեցումները։

Մ. Ի. Մորոն, Ա. Մ. Պիշկալոնն նշում են, որ. «Ուսուցման մեթոդները բացահայտում են ուսուցչի և սովորողների համատեղ գործունեության առանձնահատկությունները, որոնց օգնությամբ ձեռք է բերվում գիտելիքներ, յուրացման կարողությունը ձևավորում է աշակերտների աշխարհայացքը, բացահայտում նրանց կարողությունները»։

**Ուսուման մեթոդները.**

Ուսուցման գործընթացի կազմակերպման, ուսումնական բովանդակության ներկայացման և սովորողների ճանաչողական գործունեության կառավարման ուղիներն են։

Ուսուցչի գործունեության օրինաչափություններ են, որոնք համապատասխանում են, վերարտադրելի և կիրառելի են տարբեր առարկաներ դասավանդելիս։

Յուրաքանչյուր ուսուցման մեթոդ բաղկացած է տարբեր բաղկացուցիչ մասերից։

Որևէ ուսուցման մեթոդի կիրառումը հնարավոր է իրականացնել ամենատարբեր դիդակտիկ պարագաների միջոցով՝ կախված դասարանի և դասավանդվող առարկաների առանձնահատկություններից։

Յուրաքնչյուր ուսուցման մեթոդ ենթադրում է նպատակ, գործողությունների համակարգ, ուսուցման միջոցներ և նախատեսված արդյունք, իսկ մեթոդի օբյեկն ու սուբյոկտը հանդիսանում է սովորողը։

Սովորաբար ուսուցիչները համադրում են տարբեր մեթոդներ, միայն մեկ մեթոդն ամբողջությամբ կիրառվում է շատ հազվադեպ՝ գրեթե միայն հետատազուտություն կիրառելիս։ Կրթության գործընթացում ուսուցման մեթոդները բավական կարևոր դեր են կատարում։ Դրանք իրականացնում են կազմակերպչական, մոտիվացիոն, ուսուցողական, զարգացնող և կրթական գործառույթներ։ Այս գործառույթները սերտորեն կապված են իրար և կախված են միմյանցից։

Ուսուման մեթոդները կարելի է դասակարգել ըստ տարբեր հիմքերի։

## Մաս 2

### Շրջված դասարան մեթոդի առանձնահատկությունները:

Ներկայումս շատ մանկավարժներ, ուսուցիչներ, հոգեբաններ կարծում են, որ ավանդական դասը բավականաչափ արդյունավետ ուսուցման մեթոդ չէ, քանի որ այդ դեպքում յուրացվում է ստացած տեղեկատվության միայն մի մասը: Ավանդական դասի ընթացքում տեղեկատվական միջոցների կիրառումը, այդ թվում ամենատարբեր կրթադաստիարակչական էլեկտրոնային նյութերը, թույլ են տալիս կատարել Շրջված դասարան մեթոդի կիրառումն այնպես, որ նյութի ուսուցանումը տեղի ունենա օնլայն ռեժիմում, իսկ տնային առաջադրանքները կատարվեն իրական դասարանում՝ ուսուցչի հսկողության ներքո:

Շրջված դասարան մեթոդի հիմնադիրները քիմիայի ամերիկացի ուսուցիչներ են: Ամեն բան սկիզբ է առել բացակայող աշակերտների համար դասի վերաբերյալ Power Point ներկայացում պատրաստելուց, իսկ հետագայում սկսել են ձայնագրել տեսադասեր իրենց առարկայի վերաբերյալ և վերածել դրանք տնային աշխատանքների, ինչը մեծ հետաքրքրություն է առաջացրեցրել նրանց սովորողների շրջանում: Նրանք խոստովանել են, որ սկզբնական շրջանում տեսադասերը ստեղծել են էգոիստական դրդապատճառներից ելնելով, որ միևնույն նյութը ստիպված չլինեն ներկայացնել մի քանի անգամ:

Նրանց փորձառությունից հետո շատ ուսուցիչների է սկսել հետաքրքրել մեթոդը և լայն տարածում է գտել ամբողջ աշխարհում:

Մեթոդի հիմնական գաղափարը աշակերտներին ինքնուրույն սովորելու դրդելն է:

Շրջված դասարան մեթոդը պահանջում է աշակերտների ավելի բարձր պատասխանատվություն: Այն գրեթե բացառում է աշակերտների անտարբերությունը և ստիպում ձգտել սովորելու: Այս դեպքում արդեն չի հաջողվի արտագրել տնային

աշկատանքներն ուրիշներից, իսկ եթե որևէ բացթողում ունենա, ապա դրա մեղավորը ուսուցիչը կամ դպրոցը չի լինի, այլ հենց ինքը՝ աշակերտը: Աշակերտը ստիպված է կրել պատասխանատվություն, ինչը կնպաստի նրա զարգացմանը:

Շրջված դասարան մեթոդի հիմնական գաղափարը աշակերտների կողմից տեսական նյութը ինքնուրույն յուրացնելու կարողություն սերմանելն է:[2]

Այս դեպքում աշակերտի տնային աշխատանքը լինում է ինքնուրույն սովորել նոր ուսումնական նյութը՝ օգտվելով ուսուցչի կողմից նախապես տրամադրված նյութերից և տեսադասերից, որին կարելի է ավելացնել նաև ընթերցանություն և թեստեր

Շրջված դասարան մեթոդն աշակերտների համար ևս ունի իր առավելությունները՝ նա կարող է դիտել տեսադասն այն ժամին, երբ իրեն հարմար է, այնտեղ, որտեղ ցանկալի է և այնքան անգամ, մինչև ամբողջությամբ յուրացնի այն: Եթե դասի ժամին բացատրվող նյութն անուշադրության մատնելու արդյունքում հնարավոր չէ լսել ևս մեկ անգամ, ապա այս դեպքում նման խնդիր չկա:

Այս ամենն իրականացնելուց հետո ուսուցիչը կարող է տեղադրել մի քանի հարցեր, որոնց պատասխաններից կհասկանա, թե որքանով են աշակերտները յուրացրել տվյալ նյութը: Այս դեպքում դասարանային աշխատանքն ուղղված է գործնական աշխատանքներ կատարելուն:

Ուսուցիչն օգնում է աշակերտներին գտնել այն հարցերի պատասխանները, որոնք ավելի շատ դժվարություններ են առաջացրել:

Շրջված դասարան մեթոդը կիրառելիս աշակերտը դառնում է դասի ակտիվ մասնակից, կրթական գործընթացում նա արդեն ունի գիտելիքի որոշակի պաշար,

[2] https://www.youtube.com/watch?v=SHS96Icdk2U

որը ստացել է մինչ դասը, իսկ ուսուցիչն ավելի շատ ժամանակ է կարողանում տրամադրել աշակերտների հետ անհատական աշխատելու համար։[3]

Շրջված դասարան մեթոդի կիրառման հիմնական փուլերը ունեն հետևյալ տեսքը.

**Նախապատրաստական փուլ,** երբ ուսուցիչը ձայնագրում է տեսադասը կամ գտնում դրան փոխարինող այլ տեսադասեր, նախապես ընտրված էլեկտրոնային ռեսուրսների միջոցով ուղարկում է աշակերտներին։

**Տնային աշխատանք,** երբ աշակերտները տանն ուսումնասիրում և սովորում են այս կամ այն նյութը, որը նախապես պատրաստել և իրենց է փոխանցել ուսուցիչը։

**Դասարանական աշխատանք,** երբ աշակերտներն ուսուցչի հսկողությամբ իրականացնում են խմբային կամ անհատական աշխատանքներ։

**Դասի ամփոփում,** երբ ամբողջությամբ ամփոփվում է յուրացված նյութը։

Շրջված դասարան մեթոդը ակտիվ ուսուցման տեսակ է, որը թույլ է տալիս աշակերտին ներգրավվել խմբային աշխատանքի մեջ, սովորել աշխատել թիմային։ Մեթոդի ամենամեծ ձեռքբերումը առաջին հերթին այն է, որ հնարավորություն է տրվում ուսուցման ժամանակ ավելի մեծ մասը տրամադրել խմբային աշխատանքների կատարմանը, որտեղ աշակերտները հնարավորություն են ունենում քննարկել տեսական մասի բովանդակությունը, ստուգել իրենց գիտելիքները և գործնականում կիրառել դրանք։ Դասարանական աշխատանքների ժամանակ ուսուցչը հանդես է գալիս որպես խորհրդատու՝ ուղղորդելով աշակերդներին ինքնուրույն և խմբային աշխատանքների։

Շրջված դասարան մեթոդը ենթադրում է ուսուցչի դերի փոփոխություն։ Ուսուցիչը հրաժարվում է իր առաջնային դիրքից՝ ի նպաստ ավելի սերտ

[3] https://dpir.mskh.am/hy/node/761

համագործակցության և կրթական գործընթացում աշակերտների հետ համատեղ աշխատանքի։

Տեղի ունեցող փոփոխություններն անդրադառնում են նաև աշակերտների դերի վրա, նրանք էլ իրենց հերթին են կրում որոշակի փոփոխություններ։ Նրանցից շատերը սովոր են լինել կրթական գործընթացի պասիվ մասնակիցներ, քանի որ նյութը նրանց մատուցվում է ամբողջությամբ պատրաստի վիճակում։[4]

Շրջված դասարան մեթոդը ավելի շատ պատասխանատվություն է դնում նրանց ուսերին՝ խթան հանդիսանալով, որ նրանք գնան էքսպերիմենտների։ Աշակերտների միմյանց հետ սերտ շփումը կարող է շարժիչ ուժ հանդիսանալ գործընթացի նորարար ուսուցման մեթոդի կիրառման համար։

[4] https://cft.vanderbilt.edu/guides-sub-pages/flipping-the-classroom/

## Մաս 3

## Շրջված դասարան մեթոդի դրական և բացասական կողմերը

Շրջված դասարան մոթոդը փորձարկած ուսուցիչները առանձնացնում են մեթոդի հետևյալ առանձնահատկությունները.

Աշակերտները հետաքրքրություն են ցուցաբերում դասարանական աշխատանքներին։ Երբ աշակերտները թիմային են աշխատում, ապա նրանց մոտ զարգանում են հաղորդակցվելու, համագործակցելու հմտություններ։

Յուրաքանչյուր երեխա հնարավորություն ունի աշխատել իր տեմպին համապատասխան, օրինակ՝ տեսադաս դիտելիս աշակերտը հնարավորություն ունի կրկին դիտել, եթե որևէ բան անհասկանալի է մնացել, կամ շրջանցել այն հատվածները, որնք արդեն յուրացրել է։

Աշակերտի մոտ բարձրանում է ուսուցանվող նյութի հանդեպ հետաքրքրությունը և մոտիվացիան։

Ամբողջ նյութը հավասարապես հասանելի է բոլոր աշակերտներին, նույնիսկ նրանց, ովքեր բացակայել են դասից։

Բարձրանում է ոսուցման նկատմամբ աշակերտների ցուցաբերած պատասխանատվության մակարդակը։

Աշակերտները կարող են սովորել ոչ թե դասարանում, այլ իրենց հարմար տեղում և ժամին։

Մեծանում է աշակերտների միմանց հետ համագործակցելու հնարավորությունը դասի ժամանակ, քանի որ ուսուցիչը կարող է օգնական նշանակել այն աշակերտներին, ովքեր ավելի արագ են կողմնորոշվում և յուրացնում նյութը։

Ուսուցիչը հանդես է գալիս համակարգողի դերում։

Դասարանում սովորողները ակտիվ մասնակցություն են ունենում հանձնարարությունը կատարելու գործընթացում։

Ուսուցիչը հնարավորություն ունի ավելի արդյունավետ կազմակերպել կրթական գործունեությունը։

Ուսուցիչը տեղեկատվական տեխնոլոգիաների գործիքների կիրառմամբ կարող է կազմակերպել աշխակերտների գիտելիքների ստուգումը և հասկանալ, թե որ մասում աշակերտներն ունեն խնդիրներ և որտեղ է պետք ավելի շատ աշխատանքներ տանել։

Կրթական գործընթացում այս կերպ հնարավոր է լինում ներառել նաև աշակերտների ծնողներին, որոնք ևս կարող են դիտել երեխաների հետ և դժվարանալու դեպքում լրացուցիչ բացատրել։

Շրջված դասարան մեթոդն ունի նաև իր բացասական կողմերը

Ամակերտները շատ ժամանակ են անցկացնում համակարգչի առաջ։

Ոչ բոլոր երեխաներն ունեն համապատասխան գործիքներ և հասանելիություն համացանցին։

Նոր ձևաչափով դասին հարմարվելու դժվարություն։

Տնային աշխատանքը դառնում է դասի պարտադիր պայման։

Ուսուցիչը պետք է լավ տիրապետի տեղեկատվական տեխնոլոգիաների գործիքներին։

Բացատրել ծնողներին նոր մեթոդի արդյունավետությունը։

## Վերջաբան

Այսպիսով, տարրական դպրոցում տարբեր հանրակրթական առարկաների գործընթացը սերտորեն կապված է ուսուցման մեթոդների հետ, որոնք բացահայտում են ուսուցչի և սովորողների համատեղ գործունեության ձևերն ու առանձնահատկությունները, որոնց միջոցով ձեռք է բերվում գիտելիքների, հմտությունների մեծ բազա, ձևավորվում է աշխարհայացքը, զարգացնում նրանց կարողությունները:

Այսօր ավանդական ուսուցման մեթոդները համալրվում են նորերով, որոնցից մեկն էլ Շրջված դասարան մեթոդն է:

Շրջված դասարան ուսուցման հայեցակարգը հիմնված է այնպիսի գաղափարների վրա, ինչպիսիք են ակտիվ ուսուցումը, սովորողներին ուսուցման ընդհանուր գործունեության մեջ ներգրավելը:[5]

Շրջված դասարան մեթոդի կարևորությունը կայանում է նրանում, որ դասարանական աշխատանքը ավելի շատ խմբային բնույթի է լինում, սովորողներն ավելի շատ հնարավորություն են ստանում նյութի քննարկման և իրենց գիտելիքները միմյանց փոխանցելու և դրանք գործնականում կիրառելու համար:

| | **Ավանդական դաս** | **Շրջված դասարան** |
|---|---|---|
| **Սովորող** | Պասիվություն,ինքնուրույն ուսումնական գործընթաց իրականացնելու ձգտման և ցանկության բացակայություն | Սովորողների ներգրավվածություն ուսումնական գործընթացում, կրթության հանդեպ պատասխանատվություն, համագործակցություն կրթական գործընթացի բոլոր մասնակիցների |

[5] https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Mard%20ev%20hasara

| | | |
|---|---|---|
| | | միջև, իմաստալից ուսուցում |
| **Ուսուցիչ** | Գիտելիքի փոխանցում, կազապահության ապահովում դասարանում, սովորողների գիտելիքների վերահսկում: | Ուսումնական գործընթացի կառուցում, սովորողների պատասխանատվության ձևավորում, վստահություն |
| **ՏՀՏ** | ՏՀՏ գործիքների կիրառում ուսումնական գործընթացում | Ուսումնական աշխատանքների մեթոդների փոփոխություն ՏՀՏ-ի միջոցով |
| **Մեթոդներ** | Ուսումնական նյութի մատուցման պասիվ մեթոդներ, երբ տեղեկատվությունը ուսուցչից փոխանցվում է սովորողին: | Ուսուցման ակտիվ և ինտերակտիվ մեթոդներ, անհատական մոտեցման մեթոդ: |
| **Դասի կառուցում** | Դասարանում սովորողները լսում են ուսուցչի բացատրությունը, տանը կատարում են տնային աշխատանքներ՝ առանց հարց տալու, հուշում ստանալու հնարավորություն: | Սովորողները ինքնուրույն սովորում են նոր նյութը՝ հիմնվելով դասագրքի և առցանց ռեսուրսների վրա, դպրոցում իրականացվում է յուրացված նյութի ամրապնդում և աշխատանք: |

Այսպիսով, մանկավարժական տեսանկյունից ուսուցիչների համար մեծ մարտահրավեր է դասընթացների կազմակերպումը և տնային առաջադրանքների հանձնարարումը: Շրջված դասարան մեթոդն առաջացնում է ուսուցչի վարքագծի խորը փոփոխություններ. Վերջինս ամբողջովին դեմ առ դեմ մոտեցումից անցում էկատարում կողք կոխքի մոտեցման:

Այս խնդրի բարդությունն ունի երկու բաղադրիչ՝ մեթոդաբանական և տեխնոլոգիական: Խնդրի տեխնոլոգիական մասը առաջին հերթին այն է, որ ուսուցչի համար ամեն ինչ նոր է:

Տեխնոլոգիական բարդությունները հաղթահարելու համար ստեղծվել են տարբեր առարկաների համար մեծ քանակությամբ անվճար առցանց ռեսուրսներ, հարթակներ, պատրաստի բարձրորակ տեսադասեր[6]

[6] https://multiurok.ru/files/shrjvats-dasaran-flipped-classroo

## Գրականության ցանկ

1. «Педагогика и методика начального образования» / А.Б. Белошистая- М: Гуманитар. изд. центр ВЛАДОС, 2007. - 455 с.

2. Богданова Д. Перевернутый урок. / Дети в информационном обществе. 2012. №11. с. 68 - 71.

3.https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Mard%

4https://dpir.mskh.am/hy/node761/

5 https://m.youtube.com/watch?v=SHS96Icdk2U&feature=youtu.be

6https://multiurok.ru/files/shrjvats-dasaran-flipped-classroom-1.html